



«Ականատես» դիտորդական առաքելության հայտարարությունը

2021թ. ՏԻՄ ընտրությունների հետընտրական զարգացումների մասին

2018 թվականից՝ Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցող ազատ և արդար ընտրությունները հիմնական ցուցանիշն են, որոնք ազդարարել են որոշակի առաջընթաց պետության ժողովրդավարական զարգացման ճանապարհին: Տվյալ առաջընթացը, թեև վարչական ռեսուրսի առանձին դրսևորումների մատնանշմամբ, արձանագրվել է տեղական և միջազգային դիտորդական առաքելությունների գեկույցներում: Դրական միտումները հետագայում արտացոլվել են միջազգային ցուցիչներում՝ գրանցելով գնահատականների զգալի բարելավում նախորդ տարիների նկատմամբ:

Վերջին ժամանակներում խիստ մտահոգիչ են տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) ընտրություններին հաջորդող գործընթացները առանձին համայնքներում, որոնք ստվերում և վտանգի տակ են դնում արձանագրված ձեռքբերումները և ստանձնած ժողովրդավարական բարեփոխումները:

Հատկապես՝ 2021թ. դեկտեմբերի 5-ին տեղի ունեցած ՏԻՄ ընտրություններից հետո իշխող քաղաքական ուժի կողմից տարբեր անհարկի միջամտությունների միջոցով փորձեր են կատարվել ազդելու ՏԻՄ-երի ձևավորման վրա: Մասնավորապես՝ անհանգստացնող են ստորև բերվող դրվագները, ներառյալ՝ առանձին ՏԻՄ-երի ընտրություններում քվեարկության արդյունքները չընդունելու հիմքով ՏԻՄ-երի ձևավորումը բոյկոտելը, կոալիցիաների ձևավորման ընթացքում ընդդիմադիր ուժերի ներկայացուցիչների նկատմամբ ճնշումների վերաբերյալ ահազանգերը, հաղթող թեկնածուների նկատմամբ՝ հատկապես հետընտրական ժամանակահատվածում կիրառվող քրեական հետապնդումները:

Ընտրությունների արդյունքների բոյկոտում

Արարատի մարզի Վեդի խոշորացված համայնքում ս.թ. դեկտեմբերի 5-ին տեղի ունեցած ՏԻՄ ընտրություններին մասնակցել են քաղաքական երեք ուժեր՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը (ՔՊԿ), «Իմ հզոր համայնք» կուսակցությունը և «Հանրապետություն» կուսակցությունը: Քվեարկության արդյունքում ընտրողների ձայները բաշխվել են հետևյալ կերպ.

Մարզ	Համայնք	Կուսակցություն, կուսակցությունների դաշինք	Կողմ ձայներ	% (կողմ ձայներ + անճշտությունների չափ)	Մանդատների քանակ
Արարատ	Վեդի	«Իմ հզոր համայնք» կուսակցություն	8,666	44.08	12
Արարատ	Վեդի	«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն	7,690	39.12	11
Արարատ	Վեդի	«Հանրապետություն» կուսակցություն	3,299	16.78	4

Չստանալով քվեների՝ օրենքով սահմանված 50% + 1 մեծամասնությունը, դեկտեմբերի 16-ին «Քաղաքացիական պայմանագիր» և «Հանրապետություն» կուսակցությունների ընտրական ցուցակների ավագանու բոլոր թեկնածուները տարածքային ընտրական հանձնաժողով ներկայացրել են ինքնաբացարկի դիմումներ՝ փաստացի տապալելով համայնքային իշխանության ձևավորման գործընթացը: ԹՊԿ՝ համայնքապետի թեկնածու Գարիկ Սարգսյանը այս որոշումը հիմնավորել է նրանով, որ ԹՊ և «Հանրապետություն» կուսակցություններին չի հաջողվել կոալիցիա ձևավորել, ինչն էլ պատճառ է հանդիսացել մանդատները վայր դնելու համար: Հաշվի առնելով, որ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի հոդված 73-ի համաձայն, որևէ ուժի՝ սահմանված մանդատների մեծամասնությունը չստանալու պարագայում կառավարությունը պարտավոր է նոր ընտրություն նշանակել, ուստի Վեդի խոշորացված համայնքում նախատեսվում են նոր ՏԻՄ ընտրություններ:

Կոալիցիաների ձևավորման վրա ներգործում

Արագածոտնի մարզի Թալին խոշորացված համայնքում ս.թ. դեկտեմբերի 5-ին տեղի ունեցած ՏԻՄ ընտրություններին մասնակցել են քաղաքական չորս ուժեր՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը, «Չարթոնք» ազգային քրիստոնեական կուսակցությունը, «Հայք» լիբերալ կուսակցությունը, «Մեր համայնքը» կուսակցությունների դաշինքը: Բվեարկության արդյունքում ընտրողների ձայները բաշխվել են հետևյալ կերպ՝

Մարզ	Համայնք	Կուսակցություն, կուսակցությունների դաշինք	Կողմ ձայներ	% (կողմ ձայներ + անճշտությունների չափ)	Մանդատների քանակ
Արագածոտն	Թալին	«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն	5,037	46.63	10

Արագածոտն	Թալին	«Չարթոնք» ազգային-քրիստոնեական կուսակցություն	2,882	26.68	6
Արագածոտն	Թալին	«Հայք» լիբերալ կուսակցություն	1,624	15.04	3
Արագածոտն	Թալին	«Մեր համայնքը» կուսակցությունների դաշինք	1,258	11.65	2

ՏԻՄ ընտրություններում ձայների 46.63 տոկոսը ստացել է ԲԴԿ-ն: Ընտրություններին մասնակցած ընդդիմադիր մյուս երեք քաղաքական ուժերը կազմել են կոալիցիա և առաջադրել համայնքի ղեկավարի միասնական թեկնածու՝ «Հայք» խմբակցությունից: Սակայն Թալին համայնքի ավագանու առաջին նիստում համայնքապետ է ընտրվել ԲԴԿ-ի թեկնածուն (մեկ ձայնի առավելությամբ), քանի որ «Հայք» խմբակցության ընտրական ցուցակի ներկայացուցիչը, նշված երեք քաղաքական ուժերի համագործակցության փաստաթղթին դեմ գնալով, քվեարկել է ԲԴԿ կուսակցության թեկնածուի օգտին: Ըստ ստացված ահազանգերի՝ ճնշումներ և սպառնալիքներ են կիրառվել ընդդիմադիր քաղաքական ուժերի նկատմամբ:

Քրեական հետապնդումներ

Հետընտրական զարգացումների տեսանկյունից հատկապես մտահոգիչ են համայնքի ղեկավարի ընդդիմադիր թեկնածուների ձերբակալությունների դեպքերը, քանզի դրանք անմիջապես հաջորդել են ընտրական գործընթացին, ինչը ողջամիտ կասկածի տակ է դնում դրանց փոխկապակցվածությունը ընտրությունների արդյունքների հետ: Հեղափոխությունից հետո իրավապահ մարմինների կողմից նույն անձանց նկատմամբ համապատասխան գործընթացների բացակայությունը և այժմ դրանց արագ նախաձեռնումը առերևույթ կասկածներ են հարուցում վարչական ռեսուրսի չարաշահման վերաբերյալ:

Այսպես՝

Լոռու մարզի Վանաձոր խոշորացված համայնքում ՏԻՄ ընտրությունների արդյունքում 10 քաղաքական ուժերից անցողիկ շեմը հաղթահարած հինգ ուժերի քվեները բաշխվել են հետևյալ կերպ՝

Մարզ	Համայնք	Կուսակցություն, կուսակցությունների դաշինք	Կողմ ձայներ	% (կողմ ձայներ+ անճշտությունների չափ)	Մանդատների քանակ
------	---------	---	-------------	---------------------------------------	------------------

Լոռի	Վանաձոր	«Մամիկոն Ասլանյան» կուսակցությունների դաշինք	12,814	38.70	15
Լոռի	Վանաձոր	«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն	8,294	25.05	9
Լոռի	Վանաձոր	Հայաստանի աշխատավորական սոցիալիստական կուսակցություն	4,810	14.53	5
Լոռի	Վանաձոր	«Հայրենիք» կուսակցություն	1,484	4.48	2
Լոռի	Վանաձոր	«Ապրելու երկիր» կուսակցություն	1,420	4.29	2

ՏԻՄ ընտրությունների արդյունքներով առաջատար է ճանաչվել «Մամիկոն Ասլանյան» կուսակցությունների դաշինքը, սակայն նրան չի հաջողվել կայուն մեծամասնություն ձևավորել: Նախքան Վանաձորի նորընտիր ավագանու առաջին նիստը, Վանաձորի համայնքապետի հավակնորդ և նախկին քաղաքապետ Մամիկոն Ասլանյանը ձերբակալվել և ներգրավվել է որպես մեղադրյալ՝ պաշտոնական լիազորությունների չարաշահման և պաշտոնական կեղծիքի մեղադրանքներով: Նորընտիր ավագանու անդամները մանդատները ստացել են դեկտեմբերի 22-ին: Մանդատները ստանալուց հետո ավագանին օրենքի ուժով պետք է գումարի իր առաջին նիստը: Դեռևս հայտնի չէ՝ արդյո՞ք առավելագույն ձայներ ստացած «Մամիկոն Ասլանյան» կուսակցությունների դաշինքը կմասնակցի նիստին՝ հաշվի առնելով համայնքապետի իրենց թեկնածուի կալանքի տակ գտնվելու փաստը:

Գեղարքունիքի մարզի Վարդենիս խոշորացված համայնքում ս.թ. դեկտեմբերի 5-ին տեղի ունեցած ՏԻՄ ընտրություններին ընտրողների ձայները բաշխվել են հետևյալ կերպ՝

Մարզ	Համայնք	Կուսացություն, կուսակցությունների դաշինք	Կողմ ձայներ	% (կողմ ձայներ+անճշ տությունների չափ)	Մանդատների քանակ
------	---------	--	----------------	---	---------------------

Գեղարքունիք	Վարդենիս	«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն	6,163	46.13	13
Գեղարքունիք	Վարդենիս	«Ահարոն Խաչատրյան» կուսակցությունների դաշինք	4,989	37.34	10
Գեղարքունիք	Վարդենիս	«Միասնական Վարդենիս» կուսակցությունների դաշինք	2,205	16.50	4

Մրցակցող քաղաքական ուժերից ոչ մեկը չի ստացել 50%+1 ձայներ: «Ահարոն Խաչատրյան» և «Միասնական Վարդենիս» կուսակցությունների դաշինքների՝ համայնքում տեղական իշխանության մարմինները միասնաբար ձևավորելու համաձայնության արդյունքում այդ դաշինքները, վերահաշվարկից հետո, ունեցել են ձայների շուրջ 53%-ը, և միավորվել են՝ ստանալով 14 մանդատ ընդդեմ ԶԴԿ-ի 13 մանդատի: Դրան հաջորդել է «Միասնական Վարդենիս» կուսակցությունների դաշինքի առաջնորդ և համայնքի ղեկավարի հիմնական թեկնածու Արամ Հարությունյանի ձերբակալությունը, ինչի արդյունքում նա չի կարող մասնակցել ավագանու առաջին նիստին: Մինչ այս պահը տվյալ համայնքում չի անցկացվել ավագանու առաջին նիստը, և չի ընտրվել համայնքի ղեկավար:

Հետհայաց՝ ողջամիտ հարցեր է առաջացնում նաև Սյունիքի մարզի Գորիս խոշորացված համայնքում հոկտեմբերի 17-ին՝ հենց քվեարկության ժամերին, ԶԴԿ հիմնական մրցակից «Առուշ Առուշանյան» դաշինքի շտաբում նախաձեռնված խուզարկությունը մեծաքանակ ոստիկանական ուժերի ներգրավմամբ՝ նախորդ օրը տեղի ունեցած կաշառքի բաժանման ենթադրյալ դեպքի հիման վրա:

Ընտրական գործընթացների համատեքստում է պետք նաև դիտարկել Երևան քաղաքի ավագանու ընտրություններից երեք տարի անց քաղաքապետին փոփոխելու նպատակով սանձազերծված գործընթացը, որտեղ, ըստ Երևանի ավագանու մի շարք անդամների վկայության, գործող քաղաքապետին անվստահության հայտնելու և նոր քաղաքապետի

ընտրության գործընթացն ուղեկցվել է Երևանի ավագանու ՔՊԿ անդամների վրա ճնշումների գործադրմամբ և շանտաժի գործիքների կիրառմամբ:

«Ականատես»-ը կոչ է անում իշխող ՔՊ կուսակցությանը չվտանգել Հայաստանի Հանրապետության ժողովրդավարական ձեռքբերումները և ձեռնպահ մնալ այնպիսի գործողություններից, որոնք բխում են նեղ կուսակցական ու խմբակային շահերից և կարող են խաթարել հանրության վստահությունը և հավատը ընտրական համակարգի և ժողովրդավարական կառավարման հեռանկարի առնչությամբ: